



«Այբ» կրթական հիմնադրամ
Երևան 0009, Կոռյունի 19ա
Հեռ.՝ +374 10 54 37 07, +374 98 54 37 07
info@ayb.am
www.foundation.ayb.am



«ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարություն»

հովանու ներքո (ՀՀ)



«ՀՀ կրթության, գիտության և սպորտի
նախարարություն»

հովանու ներքո (Արցախ)

Երևան, 5 սեպտեմբերի, 2019 թ.

Հարգելի տնօրեն,

«Այբ» կրթական հիմնադրամի ողջ անձնակազմի անունից շնորհավորում ենք Ձեզ նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ: Մաղթում ենք բեղմնավոր և նորանոր ձեռքբերումներով լի տարի:

Սիրով հրավիրում ենք Ձեր դպրոցին՝ մասնակցելու «Մեղու» հայերենի մրցույթին, որին մասնակցել ցանկացող դպրոցների գրանցումը սկսված է:

Այս տարի «Մեղուն» կանցկացվի **հոկտեմբերի 24**-ին:

Մրցույթին մասնակցելու համար երեխաների վճարման անդորրագիրը դպրոց ներկայացնելու և դպրոցի ցուցակներում գրանցվելու վերջնաժամկետն է **հոկտեմբերի 1**-ը, իսկ դպրոցի հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ **հոկտեմբերի 4**-ը:

Կրկին շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի և Արցախի այն դպրոցներին, որոնք մասնակցել են «Մեղու 2018»-ին, և լիահույս ենք, որ այս տարի ևս այդ դպրոցների սաները մրցույթի նկատմամբ կցուցաբերեն նույն ոգևորությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Յուրաքանչյուր մասնակից դպրոց ունի իր անփոփոխ ծածկագիրը:
Ձեր դպրոցի ծածկագիրը նշված է այս նամակի ծրարի վրա և մրցույթի կայքում:

Կից ուղարկում ենք «Մեղու»-ի մեկնարկի մասին պաստառ և դպրոցի մասնակցության հայտի ձևանմուշը, որոնց նկարագրությունը բերված է նամակի դարձերեսին:

Տեղեկացնում ենք նաև, որ այսուհետ «Մեղու» մրցույթի նկարագրող ամփոփումը, վճարման վավերապայմանները և դպրոցների համար ուղեցույցը կստանաք Էլեկտրոնային տարբերակով: Մրցույթին մասնակցելու բոլոր նյութերը հասանելի են մրցույթի կայքում www.meghu.am: Նաև բոլոր հարցերով դիմեք ձեր մարզային համակարգողներին, որոնց հեռախոսահամարները գրված են նամակի դարձերեսին:

Ակնկալում ենք ձեր դպրոցի մասնակցությունը «Հայերենը բոլորի համար» խորագրի ներքո անցկացվող այս հետաքրքիր մրցույթին:

Հարգանքով՝

Սոնա Կոչեցյան
Գործադիր տնօրեն

«Մեղու»-ի փաթեթի պարունակությունը

1. Դպրոցի հայտի ձև

Խնդրում ենք լրացնել մասնակցության հայտը և մինչև ս. թ. հոկտեմբերի 4-ը ներառյալ ներկայացնել «Այբ» հիմնադրամի գրասենյակ կամ ուղարկել փոստով՝ ձեր դպրոցի մասնակից աշակերտների ցուցակի և վճարման անդորրագրերի հետ միասին: **Մրցույթին կմասնակցեն միայն նշված ժամկետում հայտ ներկայացրած դպրոցները:**

2. A3 չափի պաստառ

Խնդրում ենք փակցնել պաստառը դպրոցում՝ որպես «Մեղու 2019»-ի հայտարարություն և մրցույթին գրանցվելու ուղեցույց՝ երեխաների համար:

«Մեղու 2019»-ի անցկացման մանրամասն կարգը, ինչպես նաև մրցույթին մասնակցելու վերաբերյալ բոլոր նյութերը հասանելի են www.meghu.am կայքում:

Ինչ է «Մեղուն»	Մարզ	Հեռախոսահամար
«Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթը ստեղծվել է մեծ ժողովրդականություն վայելող «Կենգուրու. մաթեմատիկան բոլորի համար» միջազգային մաթեմատիկական մրցույթի փորձի հիման վրա և կազմված է լեզվատրամաբանական ու հետաքրքրաշարժ առաջադրանքներից: Մրցույթն անցկացվում է անմիջականորեն դպրոցներում՝ ներգրավելով 3-12-րդ դասարանցի բոլոր ցանկացող երեխաներին: Բոլոր մասնակից դպրոցներին և աշակերտներին տրվում են մասնակցության հավաստագրեր, բոլոր երեխաները ստանում են նաև հուշանվերներ, լավագույնները՝ պատվոգրեր ու մրցանակներ: Հաղթողները որոշվում են տվյալ տարվա բոլոր մասնակիցների արդյունքների ընդհանուր հաշվետվության արդյունքում: Հաղթողների մրցանակը սահմանվում է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ տվյալ տարվա ընդհանուր արդյունքների, մրցանակակիրների և հաղթողների թվի հիման վրա:	Արագածոտն	093 01-08-63
	Արարատ	093 01-08-63
	Արմավիր	093 38-08-63
	Գեղարքունիք	093 38-08-64
	Երևան	093 01-08-63
	Լոռի	093 38-08-63
	Կոտայք	093 01-08-61
	Շիրակ	093 38-08-63
	Սյունիք	093 01-08-61
	Վայոց ձոր	093 01-08-61
	Տավուշ	098 38-08-63
	Արցախ	097 33-79-55

«Մեղու» մրցույթը չի անցկացվում դպրոցների միջև, այլ նպատակ ունի համընդհանուր հետաքրքրություն առաջացնելու հայերենի հանդեպ՝ այն առավել գրավիչ ու սիրելի դարձնելով երեխաների համար: Մրցույթի ավարտից հետո յուրաքանչյուր դպրոց կստանա իր աշակերտների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

«Մեղու» մրցույթն անցկացվում է Հայաստանում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Արցախում ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունների հովանու ներքո:

Հայաստանում և Արցախում մրցույթի բացառիկ կազմակերպիչն է «Այբ» կրթական հիմնադրամը: